ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Հարգելի ունկնդիրներ։ Ինչպես գիտեք, մենք ունենք հատուկ հաղորդաշար «Կարծիք» խորագրով, որի վերջին հաղորդման ժամանակ խոսակցության էինք հրավիրել գրականագետ Սուրեն Շտիկյանին։ Այդ հաղորդման առիթով մեր խմբագրությունն ստացավ մեկից ավելի հեռախոսազանգեր, որոնց հեղինակները խնդրում էին լրացուցիչ պարզաբանումներ, բանավիճում էին պարոն Շտիկյանի հետ։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ընդհատելով ձեզ՝ ասեմ, որ նմանատիպ հեռախոսազանգեր եղել են նաև մեր տանը և ինձ հետ խոսողները նույնպես որոշ հարցերում համամիտ չէին ինձ հետ։ Եվ շտապեմ ասել, որ դա ինձ շատ դուր էր գալիս։ Հենց դրա համար էլ հաղորդաշարը կոչվում է «Կարծիք», որպեսզի ռադիոունկնդիրներից յուրաքանչյուրը հաղորդումը լսելուց հետո, կարողանա արտահայտել իր սեփական տեսակետը, հանդես գա իր մտորումներով, արտահայտի հաճախ մեզ հակադիր իր տեսակետները, այսինքն՝ հայտնի իր կարծիքը։ Շատ անբովանդակ ու անհետաքրքիր կլիներ հաղորդաշարը, եթե այնտեղ չհնչեին տարբեր մարդկանց ամենատարբեր բնույթի ու բովանդակության կարծիքներ։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Պարոն Շտիկյան, ռադիոունկնդիրներին հետաքրքրում է հետևյալ հարցը։ Քանի որ մեր գրողների ու մշակութային գործիչների գործերը հիմնականում արդեն հրատարակված են, ապա հերիք չէ՞ արդեն բավականանալ դրանով։ Ի՞նչ կարիք կա բազմաթիվ անգամ վերահրատարակել նույն ստեղծագործությունը, ինչպես արտահայտվեց մեկը, թղթի ու փողի ավելորդ ծախս անելով։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Խոսենք փաստերով։ ՈՒնենք հայտնի հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր Ստեփաննոս Նազարյանց։ Նրա բազմաթիվ հրապարակախոսական հոդվածները, որոնք անգնահատելի արժեք են ներկայացնում, ինչպես իր ժամանակի, այնպես էլ այսօրվա ընթերցողների համար, հիմնականում հրատարակվել են «Հյուսիսափայլ» ամսագրում, որն, ինչպես հայտնի է, լույս էր տեսնում Մոսկվայում 1858-1864 թվականներին։ Եվ այսօր, այսինքն՝ շուրջ 150 տարի անց, հայ ժողովուրդը իր սեղանի վրա չունի Նազարյանցի հրապարակախոսական հոդվածների և

ոչ մի ժողովածու, որպեսզի, գոնե մոտավորապես գաղափար ունենա, թե ով է եղել նա։ Ստեփաննոս Նազարյանցի գործերը մեզ մոտ և ոչ մի անգամ չեն հրատարակվել։

ՈՒՆԵՆՔ հայ գրականության դասական Հարություն Ալամդարյան, որի բանաստեղծությունների առաջին և միակ ժողովածուն «Չափաբերականք» խորագրով, հրատարակվել է 1884 թվականին, այն էլ՝ Հայաստանից դուրս՝ հեռավոր Պետերբուրգում։ Եվ 1884 թվականից առ այսօր, շուրջ 110 տարի, Ալամդարյանի այդ ժողովածուն, որն, ի դեպ, ծավալով էլ շատ փոքր է, ոչ մի անգամ չի վերահրատարակվել և հետևաբար մեր ընթերցողը Ալամդարյան-բանաստեղծի մասին ոչ մի գաղափար չունի։ Չեմ խոսում արդեն այն մասին, որ Ալամդարյանն ունի ոչ քիչ թվով հետաքրքրական նամակներ, որոնք առհասարակ և ոչ մի անգամ չեն հրատարակվել։ ՈՒՆԵՆՔ նշանավոր հրապարակախոս, Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի բազմամյա խմբագիր Գրիգոր Արծրունի, որն իր գրական-հրապարակախոսական շուրջ 40 տարիների ընթացքում հանդես է եկել մի քանի հարյուր՝ ամենատարբեր բնույթի հոդվածներով։ 1904 թվականին նրա գրական համախոհները Թիֆլիսում հրատարակեցին Արծրունու աշխատությունների առաջին հատորը, որը սակայն իր շարունակությունը չունեցավ և ամեն ինչ դրանով էլ ավարտվեց։ ՈՒ այսօր, այսինքն՝ շուրջ 90 տարի անց, Գրիգոր Արծրունու հրապարակախոսությունը մեզ է ներկայանում ընդամենը մեկ, այլ էլ կիսատ հատորով, որովհետև մինչև այսօր, այսինքն շուրջ 90 տարի, նրանից ոչինչ չի հրատարակվել։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Նման դեպքերում, ինչպես ասում են, համապատասխան մեկնաբանություններն ավելորդ են։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Եվ, որ ցավալի է, ես կարող եմ էլի շատ օրինակներ բերել։ Արդեն չեմ խոսում այն մասին, որ գրողների մի ամբողջ խումբ էլ կա, որոնք այսպիսի տարապայման մոտեցման հետևանքով, քիչ է մնում մոռացության արժանանան։ Արսեն Բագրատունու «Հայկ Դյուցազնը», օրինակ, որը մեր կլասիցիստական գրականության գլուխգործոցն է, հրատարակվել է Վենետիկում 1858 թվականին և առ այսօր, այսինքն՝ ավելի քան 130 տարի, վերահրատարակության բախտին չի արժանացել։ ՈՒՆԵՆՔ մի

ուրիշ դասական էլ, Հովհաննես Վանանդեցի, որի մանավանդ երկու գործերը՝ «Տեսարան հանդիսիցն Հայկա, Արամա և Արայի» և «Ոսկիդար Հայաստանի», իրենց շուրջ ժամանակին լայն խոսակցություն բացեցին։ Այս գործերն էլ, սակայն, որոնք համապատասխանաբար հրատարակվել են 1841 և 1856 թվականներին, հայ ընթերցողն առ այսօր իր սեղանին չունի։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Պարոն Շտիկյան, բայց ձեր հիշատակած հեղինակների գործերը գրված են ծանրամարս գրաբարով։ Իսկ այսօր այդ լեզուն, ինչպես հայտնի է, անմատչելի է մեր ընթերցող հասարակության համար։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Հենց դա էլ այն ցավոտ հարցերից մեկն է, որի շուրջ պետք է լայն խոսակցություն սկսել։ Գաղտնիք չէ, որ հայ գրականությունը, վերցրած ամենալայն առումով, սկսած 5-րդ դարից գրաբար էր և միայն 19-րդ դարում գրաբարն աստիճանաբար սկսեց զիջել իր դիրքերը։ Այսինքն՝ շուրջ 1500 տարվա մի ժամանակաշրջան՝ մեզ մոտ ստեղծված ողջ գրականություն, միայն և բացառապես գրաբար լեզվով էր։ Եվ ձեզ հարց եմ տալիս. ճի՞շտ կլինի արդյոք հայ ժողովրդի ամենալայն զանգվածներին այսօր կտրել-պոկել շուրջ 1500 տարվա ընթացքում ստեղծած իր բոլոր տիպի մտավոր արժեքներից, վկայակոչելով միայն լեզվական հանգամանքը։ Չէ՞ որ դա նշանակում է հետևողականորեն աճեցնել սերունդ, որը պարզապես ոչինչ չգիտի իր մեծ նախորդների ստեղծած մշակութային գանձերի մասին, քանզի այն գրաբարով է գրվել, և ընդհակառակը, գիտե այն մշակույթը, որը ստեղծվել է «Հյուսիսափայլից» հետո ընկած վերջին 150 տարիների ընթացքում։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Ինձ թվում է, հարցադրումը ճիշտ է, բայց ձեր կարծիքով որն է ելքը։ Ինչ պետք է անել գրական-մշակութային այդ ժառանգությունը ժողովրդի լայն զանգվածների սեփականությունը դարձնելու համար։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Երևի շատ կզարմանաք, եթե ասեմ, որ ձեր հարցի պատասխանը բավականին պարզ է։ Այսօր մենք ունենք բազմաթիվ դպրոցներ, որտեղ ի թիվս այլ առարկաների, ավանդվում են նաև օտար լեզուներ։ Իսկ այսօր ունե՞նք որևէ դպրոց, որտեղ ավանդվի գրաբար լեզու։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Գրաբար լեզու ավանդող դպրոց, անկեղծորեն ասած, ինձ հայտնի չէ։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ահա տեսնում եք։ Այսօրվա դրությամբ չկա և ոչ մի դպրոց, որտեղ ավանդվի գրաբար։ Այդ լեզուն պաշտոնապես անցնում են Համալսարանի և Մանկավարժական ինստիտուտի միայն մի ֆակուլտետի միայն մի բաժնում և ուրիշ էլ ոչ մի տեղ։ Բնական է, որ աճող սերունդը չի տիրապետելու այդ լեզվին և ուրեմն անհաղորդ է մնալու իր նախորդների ստեղծած դարավոր մշակույթին։ Հիմա հաճախ է խոսվում դպրոցական համակարգի վերակառուցման, այնտեղ սպրդած բացթողումները վերացնելու մասին և, ուրեմն, ժամանակն է հիմնավորապես բարձրացնել այն հարցը, որ մեր հանրապետության բոլոր միջնակարգ դպրոցներում որպես պարտադիր ուսուցման առարկա պետք է մտցվի նաև գրաբար լեզուն։ Որպեսզի մեր աճող սերունդը կարողանա կարդալ և ըստ պահանջի ու ցանկության օգտվել այդ լեզվով ստեղծված ընդարձակածավալ գրականությունից և ոչ թե շատ արագ խորթանա նրանից։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Եվ ուրեմն կծագի այդ լեզվով եղած գրականության՝ գոնե ընտիր նմուշները վերահրատարակելու և ընթերցողներին հասցնելու հրամայական հարցը։ Ի դեպ, պարոն Շտիկյան, մեզ զանգողներից մեկը տրտունջ հայտնեց, որ բավական է գրքեր հրատարակել ու վերահրատարակել, որ դրանք միևնույն է, ամիսներով ու տարիներով մնում են գրախանութներում ու չեն վաճառվում։ Ինչ եք կարծում, այս բողոքը ինչ-որ տեղ ճիշտ չէ՞։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Պատասխանս այսպիսին է՝ առաջին, գիրքը, որպես այդպիսին, որպես երևույթ, հիմնականում տեղ է գրավում մտավորականության տարածքի սահմաններում։ Մտավորականն է, որ ստեղծում է գիրքը, և առաջին հերթին, մտավորականն է, որ տնօրինում է նրա առքն ու վաճառքը։ Իսկ այսօրվա դրությամբ, հայազգի մտավորականությունը գտնվում է ֆինանսական այնպիսի աննախանձելի վիճակում, որ չի կարող իրեն գիրք գնելու նման շռայլություն թույլ տալ։ Ես լավ գիտեմ, որ հիմա ինձ լսում են բազմաթիվ ունկնդիրներ, և չեմ ամաչում ի լուր բոլորի ասել, որ վերջին ժամանակներս մեր կրպակներից նույնիսկ թերթ չեմ գնել։ Չեմ խոսում արդեն

գիրք գնելու մասին, չնայած վաճառքում կան ինձ համար մեծապես անհրաժեշտ մասնագիտական գրքեր։ Եվ այսպիսի վիճակում է հայ մտավորականության՝ անվիճելիորեն գերակշիռ մասը՝ սկսած կոչումավոր ու տիտղոսավոր այրերից, վերջացրած սկսնակներով։ Այս պայմաններում միանգամայն հասկանալի է, որ մեր մտավորականությունը, որը հենց ինքը պետք է իրականացնի գիրք գնելու հետ առնչվող գործարքները, իր ֆինանսական ծանրագույն պայմանների հետևանքով այդ չի անելու։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Այո, այս առումով մեր մտավորականության վիճակը հեռու է բավարար լինելուց։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ցանկանում ենք դա, թե ոչ, այսօր գոյություն ունի Հայաստան և նրա անբաժանելի մասը կազմող հայկական սփյուռք, այսինքն՝ Մայր Հայրենիքից տարանջատված հայերի մի հատված, որը սփռված է երկրագնդի բառացիորեն բոլոր մայրցամաքներում ու բազմաթիվ պետություններում։ Սփյուռքն ունի իր ներքին կյանքը, ունի իր զարգացման օրինաչափությունները, և ամենակարևորը, ունի իր շատ ինքնատիպ մտավորականությունը, որն ակնդետ հետևում է հայրենիքի գրական-մշակութային կյանքին։ ՈՒստի բնական է, որ մեր առաջնահերթ խնդիրներից մեկն էլ պետք է լինի նրանց հայերեն լեզվով գրականությամբ ապահովելը։ Եվ այստեղ է ահա, որ գործը կատարելապես անբավարար վիճակի մեջ է, որովհետև Մայր Հայրենիքում հրատարակվող գրականության բացարձակ գերակշիռ մասը սփյուռք չի առաքվում, և հետևաբար չի հասնում սփյուռքահայ մտավորականությանը։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Այո, դա ճիշտ է։ Այս կապակցությամբ մենք բազմաթիվ նամակ-բողոքներ ենք ստանում։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ահա տեսնո՞ւմ եք։ Մինչդեռ սփյուռքի մեր գաղթօջախներին գրքեր մատակարարելը, հենց թեկուզ ֆինանսական կողմը նկատի ունենալով, մեծապես օգտակար կլիներ թե՛ մեր, և թե՛ սփյուռքահայության համար, այս հասկացողության ամենադրական առումով։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Կուզենայի նկատել հետևյալը։ Ամերիկայի հայկական գաղութի թվաքանակն այսօր մոտենում է շուրջ մեկ միլիոն մարդու։ Եթե նրանցից յուրաքանչյուրը ամբողջ տարվա ընթացքում գնի գոնե մեկ հատ գիրք, իսկ դա առավել քան հնարավոր է, նշանակում է տարեկան մեկ միլիոն հատոր գիրք կարող է սպառել միայն Ամերիկայի հայկական գաղութը։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Դուք այնքան բնորոշ օրինակ բերեցիք, որ ես ուրիշ բան չունեմ ավելացնելու։ Իսկ այդ հարցը, այսինքն՝ արտասահմանի մեր գաղթօջախները գրքերով ապահովելը, նորից եմ կրկնում, պարզապես անուշադրության է մատնված։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Մեր խոսակցությունը շատ հետաքրքիր է։ Դուք նշեցիք գրքերի հրատարակության ու նրանց վաճառքի կազմակերպման հետ առնչվող երկու սկզբունքային թերություններ։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Նշեմ նաև երրորդը և վերջինը։ Միտքս ավելի պարզ դարձնելու համար բերեմ մեկ օրինակ։ 1890 թվականին Ղևոնդ Ալիշանը Վենետիկում հրատարակում է «Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց» աշխատությունը, որն առավել հայտնի է «Այրարատ» անունով։ Համարյա հարյուր տարի է անցել այդ աշխատության հրատարակումից հետո և մինչև այսօր «Այրարատը» իր վաճառքային գինը փոփոխել է վեց անգամ։ Այսինքն՝ այդ աշխատությունը հասարակական-քաղաքական այլևայլ պատճառների հետևանքով վեց անգամ թանկացվել կամ էժանացվել է, որպեսզի ավելի հեշտությամբ իրականացվի նրա վաճառքը։ Նման օրինակներ ես շատ կարող եմ բերել, իսկ սա, իր հերթին, գալիս է ապացուցելու, որ գրքերի վաճառքի հարցում ևս պետք է կարողանալ ճկուն քաղաքականություն վարել։ Իսկ ինչպես է մեզ մոտ։ Միայն նշեմ, որ նման աշխատանքային վարքագիծ մենք պարզապես դեռ չունենք, այդ աշխատաձևը ուղղակի չկա։ Հետևանքն այն է լինում, որ գրքերը տասնյակ տարիների ընթացքում մնում են միևնույն գնով և, բնականաբար, նրանց վաճառքը շատ վատ է կատարվում։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Վերջացնենք մեր խոսակցությունը հետևյալ հարցով: Մեզ զանգահարեց մեկը և բավականին կոպիտ հայտարարեց, որ ինքը «բիզնեսի մարդ» է, իր գործից ստանում է բավական լավ եկամուտ և, ուրեմն, գրքի կարիք բնավ չունի:

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Այդպիսի մեկն էլ ինձ է զանգել, և դա հավանորեն նույն անձնավորությունն է: Իմ խոսակիցը նախ ներկայացավ՝ Ստեփան Թորոսյան, ասաց, որ ինքը կոշիկի արտադրամաս ունի, որտեղ աշխատում են ութ հոգի և լավ էլ վարձատրվում են: Ապա հավելեց. «Էլ ինչիս է պետք **Ալիշյանի** մատենագիտությունը, որը դուք պատրաստում եք, դեռ մեզանից էլ փող եք ուզում: Մենք աշխատենք, դուք ուտեք»:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Հետաքրքիր է, պարոն Շտիկյան, այս առիթով դուք ինչ կունենաք ասելու:

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Նախ, ես նորից պետք է վկայակոչեմ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»: Հիշում եք, անշուշտ, որ երբ բանաստեղծը դիմում է Աբիսողոմ աղային իր գրքի հրատարակությունը հովանավորելու համար, նրանից ստանում է հետևյալ նյարդային պատասխանը. «Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ կա, որ քու գրքիդ համար ես դրամ տամ: Լսվա՞ծ բան է, որ մեկը իրեն շահուն համար գիրք տպե և ծախքն Աբիսողոմը տա: Գնա բանիդ, եղբայր, փորձանք եղար գլխուս»: Աբիսողոմ աղայի և կոշիկի արտադրամասի տեր Ստեփան Թորոսյանի կարծիքների ընդհանրությունը առավել քան որոշակի է, և ցավալի է արձանագրել, որ մեզ մոտ այսօր մարդիկ կան, ովքեր դատում և մտածում են 120 տարի առաջ հրատարակված «Մեծապատիվ մուրացկանների» հերոսի նման: Իսկ եթե խոսենք ըստ էության, ապա պիտի ասեմ, որ կա գեղարվեստական գրականություն, որը նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար և կա գիտական-հայագիտական գրականություն, որի տարածքը շատ ավելի նեղ է, այսինքն՝ այն վերաբերում է տվյալ բնագավառի մասնագետներին: Իմ կազմած «Ալիշանի մատենագիտությունը» խստիվ մասնագիտական թեքում ունի: Այն անպայման պիտանի կլինի գրականագետներին, պատմաբաններին, ուսուցիչներին ու դասախոսներին, ուստի հասկանալի է, որ այն չի կարող հետաքրքրել կոշիկի արտելի

տիրոջը։ ՈՒրեմն նա էլ թող կարդա գեղարվեստական գրականություն, իր միտքը հարստացնի այդ գործերով, և մշտապես հիշի լատինական հանրահայտ ասույթը. «Կոշկակար, կոշիկիցդ վերև մի բարձրանա»։

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Պարոն Շտիկյան, մեր եթերային ժամանակը գրեթե սպառվել է։

ՇՏԻԿՅԱՆ Ս. –Որպես վերջաբան թույլ տվեք կարդալ մեր նորընտիր Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Գարեգին Ա-ի՝ կարծես հենց այս առիթով ասված կարճառոտ խոսքը. «Գիրքը պիտի չըլլար առանց մարդուն։ Բայց ինչ պիտի ըլլար մարդը առանց գիրքին... Խավար է աշխարհը առանց գիրքի։

Ընթեռնելու համար հարկ է գիրքը ունենալ որպես անձնական, ընտանեկան սեփականություն։

Հարգեցեք և՛ գրողները, և՛ տպողները, որովհետև առանց անոնց՝ աղքատ կըլլա մեր ազգը...

Ձեր տուներու պարունակության անբաժանելի մաս թող դառնա Հայ Գիրքը։

Առանց Հայ Գիրքի՝ ցուրտ կը մնա հայկական տունը, որքան ալ պերճորեն, շքեղորեն կահավորված ու հարդարված ըլլա ան։

Չըլլա հայ տուն, առանց Հայ Գիրքի...»

1995 թ., հունիսի 13